ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 6, 1954 Общественные науки

Ռուզան Ղանդիլյան

Վ. ՓԱՓԱԶՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՂ ՇՐՋԱՆԸ

Վ. Փափազյանը հայ գրականության նշանավոր դեմքերից է։ Նա թողել է հարուստ գրական ժառանգություն, որի զգալի մասը թե գեղարվեստական արժեքով և թե գաղափարական բովանդակությամբ իր արժանի տեղն ունի հայ կլասիկ գրականության մեջ։

Չնայած այդ հանգամանքին, մինչև այժմ Վ. Փափազյանի ստեղծագործության մասին չի գրվել քիչ թե շատ ամբողջական մի ուսումնասիրություն։

Փափազյանի մասին եղած առանձին ուսումնասիրությունները կարող են միայն նպաստել ծավալուն մոնոգրաֆիայի ստեղծմանը, որը նկատելի անհրաժեշտություն է։

Ներկա հոդվածի նպատակն է ընդհանուր գծերով բնութագրել Փափազյանի վաղ շրջանի ստեղծագործությունները։

Վ. Փափազյանի ստեղծագործությունների մասին գրողները սովորաբար սկսում են 1889 թ. հայ ժողովրդի արևմտահայ հատվածի կյանքից գրած երկերից, մինչդեռ Փափազյանը այդ պատմվածքներից առաջ հրապարակի վրա արդեն ուներ բավական ուշագրավ գործեր, որոնք նրա գրական արտադրանքի մեջ գրավում են իրենց արժանի տեղը։

Այդ գործերը մինչև այսօր ոչ միայն չեն ուսումնասիրվել, այլև անգամ չեն հիշատակվել՝ լիակատար բիբլիոգրաֆիայի բացակայության պատճառով։

* *

1880 թ. ավարտելով Էջմիածնի Նորարաց Ճեմարանի երկամյա դասընթացը, դեռևս պատանի Փափազյանը ընկնում է կյանքի ոլորապտույտի մեջ։ Առաջին ճանապարհորդությունը Թավրիզից—Թեհրան, սկիզբ է դնում նրա բազմաթիվ դիպվածներով լի թափառական կյանքին։ Ճանապարհորդությունների ընթացքում նա մոտիկից ծանոթանում է հայ, պարսիկ, թյուրք և այլազգի ժողովուրդների կյանքին, ուսումնասիրում նրանց կենցաղը, բարքերը, խորանում է սոցիալական հակասությունների մեջ, ունկնդրում նրանց գժգոհություններին, տեսնում նրանց տառապանքները։

Հենց այս տպավորություններն էլ հարուստ նյութ են տալիս նրա առաջին ստեղծագործություններին։

1883 թ. նա «Արձագանք» թերթում տպագրում է իր առաջին գործը՝ «Կաֆլանքուն»։ Նյութը վերցված է պարսկական ժողովրդական զրույցներից։ Թեհրանի ճանապարհին նրան պատմում են Կաֆլանքու լեռներում

ապաստանած մի ավազակախմբի պետ Սալթանաթ խանումի մասին, որն իր համարձակ գործողություններով ահ ու սարսափ էր տարածել քարավանների և շրջակայքում ապրող բնակչության վրա։ Զրույցը պատմում է, թե ինչպես նա իր չարագործություններից սարսափած անձնատուն է լինում։ Պատմվածքում հանդես է գալիս Սալթանաթ խանումի ամուսինը՝ Ճիրալի խանը, որը ապանված էր համարվում իր եղբայր Ալի խանի կողմից։ Սալթանաթ խանումին ամուսնու չարագործ եղբայրը փախցրել էր, բերել լեռները և բռնի ուժով դարձրել ավազակապետուհի։ Ճանաչելով եղբորը, Ալի խանը պատրաստվում է սրախողող անել նրան։ Նոր չարիքից խուսափելով՝ Սալթանաթ խանումը իրեն նետում է ձորը։ Այդ պահին Ալի խանը ճանաչում է եղբորը և սարսափահար սայթաքում, ընկնում է գետը։ Զարությունը կործանվում է, մնում է հայթանակած բարին։

«Կատիլանքում» զրույցի մեջ Փափազյանին գրավել է չարի և բարու մշանջենական պայքարի իդեան։ Նա ստեղծել է Ճիրալի խանի կերպարը, որը քարոզում է մարդասիրություն, բարություն, խաղաղություն։ Հանդես եկած ռոմանտիկական կերպարները թույլ են և վերացական։ Գործողությունները կտրված են տեղից և ժամանակից, չեն օգնում հերոսների ներքին աշխարհի բացահայտմանը։

Համեմատաբար ավելի լավ է մշակված հաջող պատմվածքը «Հաշմը» վերնագրով։ Թեհրանի հայտնի ավազակապետ Հաշմը՝ կաշառվելով Ահմեդ խանի թշնամիներից, մտնում է նրա տունը սպանելու խանին և կողոպտելու նրա ունեցվածքը։ Խանի կինը՝ Ֆաթի խանումը տեսնելով ավազակին, նախատում է նրան և խորհուրդ տալիս հրաժարվել չարիք գործելուց։ Հրապուրված խանումի գեղեցկությամբ և ամոթխած նրա խոսքերից, Հաշմը գուրս է գալիս Ահմեդ խանի տանից՝ իր մտադրությունը չիրագործած։ Հաջորդ օրը նա իրեն հանձնում է արդարադատության։ Զարը կործանվում է, բարին հաղթանակում։ Այս շրջանում գանվելով արկածային վեպերի ազդեցության տակ, Փափազյանը դեռևս չի կարողանում բմբռնել ժողովրդի մտածողության մեջ չարի և բարու սոցիալական կոնկրետ հիմքերը։

«Անկեղծ ընծա» զրույցի մեջ, սակայն, Փափազյանը փորձում է հասնել նրանց Սատանան երկրում փնտրում է անկեղծ նվեր։ Ազգատա կնոջ անձրը հարուստին գտնում է սուպանոյի համար ամենաթանկ նվերը։ Այսպես Փափազյանը անդրադառնում է դասակարգային հակասությունների հարցին, բայց այդ հարցի լուծումն էլակետը գուրս է բերված նախախնամությունը։

Փափազյանը անորոշ կերպով խարխափում է իրականության երևույթների մեկնաբանման, գեղարվեստական ձևերի որոնման մեջ։ Երբեմն որոշ չափով հաջողվում է սոցիալական հարցերի պատկերացման հատուկ ձևեր գտնել «Էրևան» և «Էնարի Ֆեբրուարն» զրույցների մեջ։

Առաջին զրույցը վերցված է ժողովրդի մեջ պատմվող «Շանամեի» դիպվածից։ Ազգի որդի Շիրազ Շահը հպատակների արյան շաղախով կառուցում է թագավորական այգի, պալատ, կողոպտում մզկիթները, գարգարում իր պալատի պատերը։ «Շիրազն ավերեց աշխարհը, ուզում է զրույցը, սով տիրեց Իրանում և Թուրանում, իսկ Էրևանը ընդարձակվում է ու ընդ-

դարձակվում», ժողովուրդը պատմում է, թե ինչպես շահի գործած այդ հանցանքի դեմ «մոռայվում էր» և բնությունը։ «Արևագակը խավար էր Էրեմի պատուհանների առջև, իսկ լուսինը լույս չուներ, աստղերը փախնում էին ակնեղենաց փայլության առջևից, իսկ ժողովուրդը զոռում էր հա՜ց...»։ Զրույցն ավարտվում է նրանով, որ նախախնամությունը պատժում է Շիգաղ Շահին, իր ագահության և փառասիրության համար։

Իրականանում է ժողովրդի ցանկությունը։ Սոցիալական հակադրություններ պատկերող այս զրույցի հիմնական եզակետը իրականությունն է։ Բռնությունը և չարը կործանելու պայմանը Փափազյանը տեսնում է շահի կործանման ժողովրդի ցանկության մեջ։

Մի քանի տարի անց Փափազյանը մշակում է այդ զրույցի նոր վարիանտներից մեկը «Դրախտը» վերնագրով, որտեղ նշում է բռնությունը կործանելուց հետո՝ ժողովրդի խաղաղության, երջանկության վերականգնման հնարավորությունը։

«Էնարի Ֆերհադն» զրույցում Փափազյանը չարության և բռնության ուժին հակադրում է լավին և բարուն ձգտող ժողովրդի կենսունակ ուժը և ստեղծագործական պոտենցիան։ Ֆերհադը ժողովրդի ներկայացուցիչն է։ Նա սիրում է Շեյրիին, նրա համար գնում է զանելու անմահական աղբյուրը։ Ֆերհադը հաղթահարում է բնության արգելքները, հայտնագործում կյանք ավող «անմահական աղբյուրը»։ Բայց այդ հայտնագործումը սիրապետող դաժան կարգերում չի դառնում մարդու կյանքի պահպանման հիմք։ Ֆերհադը հասնում է բռնությանը կաշկանդող ուժերի հաղթահարմանը, բայց ոչ հասարակության մեջ նրա վայելքի հնարավորությանը։ Նրա համար որպես միակ հնարան մնում է սերը։ Բայց մեռնում է Շեյրին, կործանվում է և ինքը՝ Ֆերհադը։

Հետագայում Փափազյանը նույն ֆաբուլայով մշակում է իր նշանավոր զրույցը «Ֆարհադ և Շիրին» վերնագրով։

Զրույցը Փափազյանի այս շրջանի ստեղծագործության գլխավոր ժանրերից մեկն է։ Նա առաջիններից մեկն է, որ հայ գրականության մեջ է բերում բանավոր ստեղծագործության՝ գրերով մշակված թանկագին արժեքները, տալով նրան իր ժամանակի հասարակական մտայնությունն արտահայտող ուրույն երանգ։

Զրույցները Փափազյանին հնարավորություն են տալիս ավելի հստակ պատկերացնելու կյանքում գոյություն ունեցող հակասությունները, որոնց նա անդրադառնում է նույն ժամանակաշրջանում գրված ռեալիստական պատմվածքների մեջ։

Փափազյանի Պոլսում ապրած տարիներին ձևավորվում են Արփիարյանի գլխավորած ռեալիստական դպրոցի սկզբունքները։ «Մասիս» պարբերականի շուրջը հավաքված երիտասարդները ռուս-թուրքական պատերազմից հետո հայ իրականության մեջ ստեղծված նոր փոխհարաբերությունների պայմաններում բարձրացնում են հասարակական երևույթների քննադատության անհրաժեշտության հարցը։

Արևմտահայ ռեալիստ գրողների վրա (Արփիարյան, Զոհրապ և ուրիշներ) որոշակի ազդեցություն է գործում արևելահայ գրականության մեջ արդեն իշխող գրական ուղղություն դարձած քննադատական ռեալիզմը։

Երիտասարդ Շիրվանզադեն, Մուրացանը, Նար—Դոսը և մյուսները, խոշոր վիպասան Րաֆֆու կողքին հանդես էին գալիս կապիտալիստական հարաբերությունների քննադատությամբ, երևան հանում դասակարգային այն նոր փոխհարաբերությունները, որոնք բերում էր կապիտալիզմն այդ շրջանում։

Փափազյանը մոտիկից ծանոթ լինելով Անդրկովկասի կյանքին «Արևելք» և «Մամիս» պարբերականների մեջ հրապարակում է ռեալիստական պատմվածքների մի շարք, որտեղ ներկայացվում էին արևելահայ գրականության մեջ արդեն երևան եկած նոր երևույթները։ Նրա այդ տարիների գործերի մեջ աչքի են ընկնում «Սարուն չիի աքծանողը», «Կենդանի մեռյալը», «Ժորժ դ'Պարին»։

Փափազյանը միաժամանակ տպագրում է վիպական ժանրի գործեր՝ «Գինանք ընթրել», «Սոխակի աղաղ» և այլն։

Նրա այդ շրջանի ստեղծագործության գլխավոր թեման դառնում է կապիտալիստական բարքերի քննադատությունը և այդ հարաբերությունների մեջ կործանվող անհատի հասարակական ողբերգությունը։

Այդ հարցին նա անդրադառնում է 1887 թվականին գրած «Սարուն չիի աքծանողը» ռեալիստական պատմվածքում. գլխավոր հերոսը երկաթգծի հին աքծանող Պանտելեյն է։ Նա պարտաճանաչ, նվիրված աշխատող է։ Մեծ հուզմունքով հետևում է գնացքների անվթար երթևեկությանը, ամեն օր հազարավոր մարդկանց կյանքը խնամքով պաշտպանում է պատահարներից։ Նրա մոտ այդ նվիրվածությունը մշակում է խստապահանջություն ճշտապահություն իր պարտականությունների նկատմամբ։

«Դժվար է, երբ մտածում ես, որ մի փոքր սխալ շարժում, կարող է ամեն բան կործանել, խիստ դժվար է...»։

Այդ զգացումը Պանտելեյի մոտ դրսևորվում է որպես հասարակական պարտքի զգացողության ցայտուն արտահայտություն։ Սակայն, Պանտելեյը միաժամանակ զգում է այն հակասությունը, որ կա իր ըմբռնումների և իր շրջապատի մարդկանց միջև։ Կոնֆլիկտը, որի վրա կառուցված է պատմվածքի սյուժեն, մարդու արժանապատվության և նրա իրավունքների մասին՝ Պանտելեյի և նրա շրջապատի մարդկանց ունեցած տարբեր մտածողությունների բախումն է։ Հեղինակը ծանոթացնում է Պանտելեյի հոգեկան վիճակին։ Կինը լքել է ամուսնուն և փախել քաղաք, խելագարության նոպաներն արտահայտող մենախոսությունների մեջ Պանտելեյը կրկնադատում է կնոջ գործած հանցանքի չափը, ապա մեղադրում նրան մարդկանց հավատալու, նրանցից խարվելու համար։ Պանտելեյն իրեն և իր կնոջը համարում է այդ հասարակության զոհերը։

Պանտելեյի հոգեկան տվայտանքները տարերայնորեն բացահայտում են նրա քաղաքական վերաբերմունքը շրջապատի հարաբերությունների, մարդու մոտ աճող վատ հատկությունների, բարքերի նկատմամբ։ Գեղարվեստական ցայտուն շտրիխներով գծագրված են կայարանի սակավաթիվ պաշտոնյաները, որոնք հիշեցնում են գոգոլյան սնամեջ, թեթևաբարո չինովնիկներին և քաղքենիներին։ Փափազյանի մոտ արտահայտվում է ռեալիստական գրականության ցայտուն գծերից մեկը, մարդկային անհատի պաշտպանությունը. սակայն նրա հերոսը, ինչպես Չեխովի մոտ, մնում է ճշմարտության որոնման ճանապարհին։ Խելագարությունն այս դեպքում դառնում է այդ որոնումների սիմվոլացված արտահայտությունը։

Փափազյանի մոտ այս մոտեցումը տարբեր արտահայտություններով երևան է գալիս հետագա տարիների ստեղծագործությունների մեջ։ Թե զրույցներում և թե պատմվածքներում նա շոշափում է ժողովրդի և անհատի ճակատագրի հարցը, որի լուծման ելակետը նրա մոտ իրականությունն է։ Սակայն նա այստեղ դեռևս չի հասնում այդ իրականության ռեալ հարաբերությունների խորը և ճշմարտացի ըմբռնմանը։

Ապրելով Թիֆլիսում, Բաքվում և Պոլսում, Փափազյանն ականատես է լինում կապիտալիստական հարաբերությունների արագ զարգացմանը այդ քաղաքներում։ Այդ զարգացումը բերում էր իր հետ նոր փոխհարաբերություններ, որոնք խստորեն անդրադառնում են մարդկային բարոյական նորմաների վրա, քայքայում բարքերը։ Փափազյանը ականատես է լինում այդ նոր փոխհարաբերություններին զոհ գնացող բազմաթիվ մարդկանց ողբերգությանը։ Չկարողանալով հարմարվել իրականությանը, այդ մարդիկ կործանվում են՝ իրենց հետ տանելով մարդկային բարձր հատկանիշները, բնածին ընդունակությունները, որոնք կոչված էին ծառայելու ժողովրդի բարօրությանը։

Բուրժուական հասարակության մեջ անհատի կործանման ցայտուն պատկերներից մեկն է 1888 թ. «Արևելյան մամուլ»-ում տպագրված «Նկարիչը» պատմվածքը։ Պատմվածքի հերոսը՝ Ռուբենը բնածին տաղանդով օժտված նկարիչ է։ Գալով Պոլիս, նա ցանկանում է կատարելագործել իր արվեստը։ Սակայն չքավորությունը հասցնում է նրան մահվան դուռը։

Իր հերոսի մեջ Փափազյանը ընդգծում է մարդու ստեղծագործական կարողությունները, արժանապատվությունը խորապես գիտակցող, իր տարրական իրավունքների ոտնահարման դեմ ըմբոստացող անհատի տիպական գծերը։ «Այստեղ, մեզ մոտ ոչխարն է մարդ համարվում, քան գրական արժանիք ունեցող անձը»,— ասում է Ռուբենը, խոսելով իր և իր նմանների մասին։ Երեք տարի շփվելով հասարակական տարբեր խավերի հետ Ռուբենը տեսնում է տիրապետող բարքերի համար բնորոշ կեղծիքը, քծնանքը, ստորաքարշությունը։ «Վիշտ և տխրություն, տանջանք և պարզություն... դոքա վերացական հասկացողություններ են...», — ասում է նա։ Ռուբենը փորձում է պայքարել այդ հասարակության մեջ ստեղծված դժվարությունների դեմ։ Հանդես է բերում կամք, տոկունություն, համբերություն, սակայն դաժան միջավայրը, մարդկային կեղծ հարաբերությունները շարունակ զգացնել են տալիս նրան իր և շրջապատի հակասությունը։ «Յուր թշվառության հիշատակը գինովցնում էր նրան,—ասում է հեղինակը,— այդ բոլոր մթնոլորտի մեջ թշվառության բաժակը քամվում էր նրա կոկորդն ի վար, տեսնում էր հարատև երջանկությունները, ստիպված էր սեղմելու իրենց»։

Ռուբենը մեռնում է կիսաքաղց։ Իր վրձինի վերջին հարվածներով կտավի վրա հավերժացնում է իր տխուր կյանքի հակադրությունը, մահից հետո ունենալիք փառքի նկատմամբ։

Ներկայացնելով իրական կյանքի ներքին հարաբերությունները, Ռուբենը կյանքի և մահվան մասին դատողություններ անելուց այն կողմ չի անցնում։

Փափազյանը չի խորանում իր հերոսի հոգեբանության մեջ՝ այն օրգանապես կապելու համար իրական կյանքի կոնկրետ երևույթների հետ։

Իր պատմվածքների, ինչպես և զրույցների մեջ Փափազյանը դրսևորում է պատմելու ձիրք, նուրբ դիտողություն, կյանքը մոտիկից իր ներքին հակասությունների մեջ դիտելու ձգտում։

1885 թ. «Մասիսում» տպագրվում է Փափազյանի «Ինանք ընթրելու» վիպակը։ Նյութը վերցված է Թիֆլիսի կյանքից։ Վիպակի գլխավոր հերոսը, իր հոր ժառանգությունը վատնող ուսանող Նիկոլան, իր հաճույքներին զոհ է դարձնում անմեղ Վարդուհուն։ Երեք տարի անց՝ հանդիպելով նրան դիմակահանդեսում, առանց ճանաչելու գիշերն անց է կացնում նրա մոտ։ Առավոտյան բացվում է գաղտնիքը։ Պարզվում է, որ Նիկոլան իր հոգում դեռևս պահպանել է մի «մաքուր անկյուն», որը ստիպում է նրան քավել իր հանցանքը և ամուսնանալ Վարդուհու հետ։

Նիկոլան իր երկվորյակներն ունի գրականության մեջ հանձին Սամվել Փուլշատյանի (Մուրացանի «Հարուստները զվարճանում են») և Ռոլամազովների (Շիրվանզադեի «Ինամատաները»)։ Սրանք զարգացնում են Սունդուկյանի մոտ արդեն ձևավորված երիտասարդ ֆրանտի կերպարը։ Նիկոլայի մեջ հեղինակը դրել է բարոյական վերափոխման հնարավորության տենդենցը։ Մաքուր սիրո զգացումը Փափազյանի համար դառնում է այն խարիսխը, որով մարդը, նրա կարծիքով, կարող է և պետք է հակադրվի կյանքի հոսի երևույթներին։

Բուրժուական հասարակության մեջ առհասարակ մարդու «վերափոխման» հնարավորության թեզը թուլացնում է քննադատական ռեալիզմի մերկացնող ուժը։ Այդ թեզը տարբեր կերպով է դրսևորվել բուրժուական և դեմոկրատական գրականությունների մեջ։ Մի դեպքում քրիստոնեական մորալի քարոզի շնորհիվ այն ներկայանում է որպես իրականության հոսի երևույթները լոկ սքողելու միջոց, մյուս դեպքում «վերափոխումը» պատկերացվում է որպես հասարակության հոսի ուժերին դեմընթաց գնալու, նրա ազդեցությունից ազատվելու տենդենց։ Փափազյանի մոտ արտահայտվում է վերջինը, որը գալիս է ժողովրդական զրույցների ազդեցությունից։

Փափազյանի վերոհիշյալ վիպակի մեջ ներկայացված են բուրժուական հարաբերությունների էությունը բացահայտող մի շարք կերպարներ, ինչպիսիք են Սիմոն Կարապետովը՝ Վարդուհու մորաքրոջ ամուսինը, նրա փեսացուն՝ Արտյոմ Մասեիչը, Վարդուհու հարևանուհին՝ տիկին Հոիփսիմեն։ Սիմոն Կարապետովը հարստացել է Վարդուհու և նրա եղբոր ժառանգության հաշվին։ Այդ ժառանգության վերջնական տերը դառնալու և նոր շահույթներ ստանալու համար նա առևտրական գործարքներ է կնքում քաղաքի հայտնի վաճառական Արտյոմ Մասեիչի հետ, գումարի փոխարեն խոստանալով կնության տալ Վարդուհուն։ Ո՞վ է Արտյոմ Մասեիչը։ Հեղինակը նրա մասին ասում է.

«Մաստիկ խորամանկ, փողասաշտ և ստոր վաճառականների թագավորն էր։ Նրան ոչ ոք չէր կարող խաբել, բոլորը նրանից խաբվում էին»։

Վիպակում ներկայացված մյուս կերպարներն արտացոլում են տվյալ ժամանակների իրական կյանքի տարբեր կողմերը։ Վիպակում կան տեղեր, որոնք հիշեցնում են Սունդուկյանի նկարագրությունները։ Հետաքրքիր ձևով են բնութագրված 80-ական թվականների հայ թատրոնի շուրջը բորբոքված պայքարի բնորոշ երևույթները։

Սակայն վեպի գաղափարական ընդգրկումը սահմանափակ է, արտահայտած տենդենցները գեղարվեստորեն դեռևս լավ չեն մշակված։

Բուրժուական հարաբերությունների քննադատմանը զուգընթաց Փափազյանին զբաղեցնում է ժողովրդի կյանքը։ Շփվելով գյուղացիական մասսաների հետ, նա հաղորդակից է դառնում ինչպես արևելյան, այնպես էլ արևմտյան Հայաստանի գյուղացիների կյանքին։ 1883 թ. նա գրել է իր առաջին վեպը՝ «Տունաշրջիկը» գյուղացիների կյանքից։ Այս երկը անտիպ է, գրված արկածային վեպի տրադիցիաներով, բայց պարունակում է իրական կյանքի թերությունները նշավակող մի շարք տիպական երևույթներ։

Այդ վեպի առանձին մասերը նա հետագայում օգտագործել է 1887 թ., «Արևելյան մամուլում» տպագրած «Սոխակի տղան» վերնագրով վեպի մեջ։

«Սոխակի տղան» վեպը պատկերում է ռուս-թյուրքական պատերազմից հետո Արևելյան Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունները։ Վեպի համառոտ բովանդակությունը հետևյալն է։ Հախվերիս գյուղի հարուստներից Մարկոս աղան պատրաստվում է իր աղջիկ Սաթենիկին կնության տալ Իգդիրի հաշտարար ատյանի գրագիր Ալեքսան աղային, որը գավառում հայտնի էր իր շահատակություններով և խարեբայություններով։ Իգդիրմավագի Դրիգորը սիրում է Սաթենիկին։ Գիշերային ժամադրություններից մեկի ժամանակ հետապնդվելով Մարկոս աղայից, Դրիգորը սպանում է նրան և փախչում լեռները, միանում «Սոխակի տղա» մականուն կրող քանաքեռցի ավազակապետ Աղասու խմբին։ «Սոխակի տղան՝ Աղասին օգնում է Դրիգորի և Սաթենիկի գաղտնի ամուսնությանը։ Վիպական այս սյուժեի մեջ Փափազյանը փորձել է ներկայացնել հայ ժողովրդի սոցիալական պայքարը՝ ցարիզմի դեմ։ Ի հակադրություն ռոմանտիկ հեղինակների ստեղծած մտացածին հերոսների, Փափազյանը ցանկացել է հրապարակ հանել ժողովրդական հերոսին և նրա միջոցով առաջ քաշել ժողովրդական շարժման մեջ գլխավոր տեղ գրավող սոցիալական հարցը։ Ինչպես տեսնում ենք, վեպի գլխավոր հերոսը «Սոխակի տղա» մականունով քանաքեռցի Աղասին է։ 1877 թվականին մի հարուստի օգնությամբ, ավարտելով Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, նա վերադառնում է գյուղ, տեսնում է, որ ընտանիքը քայքայվել է, իսկ տունը պարտքի փոխարեն վաշխառուի ձեռքն է անցել։

«Սարսափելի օրեր էին այդ օրերը,— պատմում է հեղինակը,—պատերազմն ավերում էր երկիրը, իսկ մյուս կողմից կաշառակեր պաշտոնյայք, հայ վաշխառուներն ու հարստահարիչներն՝ ազատ ասպարեզ գտած, կողոպտում էին խեղճ գյուղացիներին։ Մինչդեռ այն կողմ Խալֆալայի մոտ, Մասիսի ստորոտներում, պատերազմը ջրերը արյունաներկի էր փոխում»։

Դիգոն՝ նահանգում տիրող կարգերից, Աղասին որոշում է մոտիկից ծանոթանալ գյուղացիների կյանքին։ Նա շրջագայում է Քանաքեռի և Արարատյան նահանգի մյուս գյուղերը։ Ամեն տեղ ականատես է լինում, թե ինչպես պետական պաշտոնյաները «ոստայններ սարքած, ծծում էին գյուղացոց արյունը, ուր հարուստներն իրենց վաշխերով ծանրաբեռնում և ստրկացնում էին ժողովրդին»։ Աղասին ոչ միայն ծանոթանում է գյուղացիների տնտեսական ծանր պայմաններին, այլ միաժամանակ, ինչպես հեղինակն է վկայում, սովորեցնում է նրանց՝ պաշտպանվել շահագործողներից՝ բացելով նրանց «անօրինական արարքները»։ Փափազյանն ասում է, որ գյուղացի-

ները նրա անունը գրին «Սոխակի տղա», որովհետև նրա տված խորհուրդները հանգստացնում էին նրանց ինչպես «սոխակի երգը»։ Հեղինակն այնուհետև պատմում է, թե ինչպես Աղասին մեծ ժողովրդականություն է ձեռք բերում ոչ միայն Երևանի նահանգում, այլև Անդրկովկասում։ Նա անխնա մերկացնում է հայ վաշխառուների, քահանաների, պետական պաշտոնյաների արարքները, սովորեցնում է գյուղացիներին՝ չենթարկվել նրանց, պահանջելով արդարություն։ Այդ տիպի ավազակների մասին Փափազյանը գրում է. «Բայց Արարատի այդ փախստականները մարդասպան չեն, ստոր, գծուծ չեն և ուրիշ չարագործ ավազակների նման նոքա չեն կողոպտում աղքատներին և բարի հարուստներին, նոքա չեն գրկում խեղճերին, նոքա նեղացնում են կառավարական պաշտոնյաներին և անխիղճ հարուստներինն։

Սոցիալական պայքարի հողի վրա գծված ավազակի կերպարն իր բովանդակությամբ և տենդենցներով տարբերվում է բուրժուական գրականության մեջ ֆեոդալական բռնության դեմ ընդվզող «գաղափարական ավազակներից»։ Ինչպես ռուս, այնպես էլ հայ գրականության մեջ այս կերպարներն արտացոլում են գյուղացիության մասսայական ընդվզումները։ Ոգևորված իր հերոսի ժողովրդականությամբ, հեղինակը պաթետիկ ձևով բացագանչում է.

«Ո՞վ էր Սոխակի տղան, որտեղացի էր Արարատի անմահ քաջն ու անմոռաց Աղասին և մի՞թե կարելի է պահ մի կասկածել, որ Սոխակի տղային էլ չի սնուցել այն հողն, այն ջուրն, որ սնուցել էր Աղասինն»։

Հեղինակը պատմում է, որ իր հերոս Աղասու ծնողներն իրենց որդու անունը վերցնելով քանաքեռցի անմահ հերոսի անունից, երազել են նրան տեսնել Աղասու նման քաջ և ժողովրդական։

Արովյանի անմահ հերոսը՝ Աղասին, տրտահայտեց ժողովրդի ամենակենսական պահանջը՝ ազատագրվել պարսկական բռնապետությունից՝ ռուսական իշխանության հովանու տակ մտնելու ճանապարհով։ Արովյանն իր տաղանդի մեծ ուժով Աղասու կերպարի մեջ մարմնավորել է ժողովրդական շարժման առաջավոր ուժը և նրա պատմական հեռանկարները։

Ոգեշնչված ազգային հերոս Աղասու սխրագործություններով, Փափազյանը ցանկացել է զարգացնել նրա հատկությունները, տեսնել նրա մեջ հայ ժողովրդի քաղաքական ինքնագիտակցության նոր աստիճանը արտահայտող գծերը։ Այդ ցանկությունը իրականացնել, սակայն, չի հաջողվել։ Չի հաջողվել այն պատճառով, որ ինքը՝ Փափազյանը չի ըմբռնել իր ապրած ժամանակաշրջանի գյուղացիական շարժումների մեջ այն նորը, որն իր գեղարվեստական արտացոլումն էր գտնում գյուղը պատկերող ռուսական բազմաթիվ վեպերի մեջ։

Փափազյանը հնարավորություն չի ունեցել հանգամանորեն արտացոլելու գյուղացիական շարժման ձգտումներն արտահայտող իր հերոսի պայքարի գաղափարական այն ակունքները, որոնք արձագանք էին անմիջապես գյուղացիական ընդվզումների և Ռուսաստանում ծավալվող սոցիալական շարժման։

Լենինը իր «Սոցիալ-դեմոկրատիայի ագրարային ծրագիրը 1905—1907 թվերի ռուսական առաջին ռևոլյուցիայի մեջ» աշխատությունում ցույց է տվել, որ Ռուսաստանի հետռեֆորմյան պատմության մեջ հիմնական

հարցը ագրարային հարցն է, որը, որպես ռևոլյուցիայի տնտեսական կարևորագույն հիմքը, դրսևորում է գյուղացիական և կալվածատիրական շահերի միջև եղած պայքարը։

Հայ գրականության մեջ այդ շրջանի գյուղացիական և կալվածատիրական խավերի միջև եղած պայքարի գեղարվեստական պատկերումը մնում են Ղ. Աղայանի «Երկու քույրը» վիպակը և Պ. Պռոշյանի «Հացի խնդիրը» վեպը։

* * *

1885—1898 թվականներին Փափազյանը մանրամասն ուսումնասիրում է արևմտահայ իրականությունը։ Այդ ուսումնասիրությունը նա կատարում է ոչ թե գրականության միջոցով, այլ ճանապարհորդելով բազմաթիվ վայրերում։ Նա լինում է Էրզրումի, Վանի, Պոլսի և հայաբնակ մի շարք այլ գավառներում։ Մտնելով յուրաքանչյուր գյուղ, նա մանրամասնորեն ուսումնասիրում է գյուղացիների տնտեսական կյանքը, գոյություն ունեցող սոցիալական հակասությունները, հետաքրքրվում է գյուղացու ունեցած հողակտորի քանակով, նրա պարտքերով, պարտքի դիմաց կուտակված տոկոսներով, գյուղացու տրամադրություններով և այլն։ Նա ծանոթանում է նաև հայ գյուղացու օգտին ճառեր արտասանող «ազգային բարերարների» հետ, որոնք կազմակերպում էին զանազան ընկերություններ, միություններ, բայց առավել չափով մտահոգված էին իրենց սեփական շահով, քան թե գյուղացիների վիճակով։

Իր ճանապարհորդության ընթացքում տեսնում է տնտեսապես քայքայվող գյուղեր, որոնք ըմբոստանում են բռնության շղթաների դեմ, երազում ռուսական իշխանության սահմաններում լինել։ Նա տեսնում է գյուղերի բնակիչների խորը հիասթափությունը եվրոպական դիպլոմատիայի խաղերից, եվրոպական գաղութարարներից, հայ բուրժուազիայի քարոզներից։

1889 թվականին «Մշակ» թերթում Փափազյանը հրապարակում է իր «Նամակները Թյուրքահայոց կյանքից» շարքը «Ապրո» ստորագրությամբ։ Այդ նամակները նշանակալից երևույթ էին հայ իրականության մեջ։ Մամուլում առաջին անգամ հանգամանորեն երևան էր գալիս ֆեոդալական հարաբերությունների մեջ կապիտալիզմի դանդաղ զարգացման պրոցեսն ապրող հայ գյուղի իրական պատկերն արտահայտող մի շարք երևույթներ։

Այդ նամակներում կան թյուրքական պետության ագրարային քաղաքականությունը արտացոլող մի շարք նկարագրություններ։ Թյուրքիայի հարկային քաղաքականության մասին ընորոշ է Փափազյանի հետևյալ նկարագրությունը.

«Պետք է մտնել մի քանի անգամ «Թափուդայիրեսի» կոչվող հողային վարչության գրասենյակը, նստել փոքր և տեսնել, թե ինչպես գյուղացիների կոկորդից բռնած վաշխառուները ներս են վազում այնտեղ, գոռում են, գոչում, կառավարչի մոտը ոսկիներով լցնում և խեղճ գյուղացիներին անհող թողած մի թղթով գնում տիրանում են մեծ տարածությամբ արգավանդ դաշտի։ Պետք է տեսնել քյուրդ աղաների, հայ աղաների, որոնք կառավարչի ականջին փսփսում են, գրագիրը անդադար հող է ծախում ու հող առնում»։

«Թափուգայիրեսիս» կոչված հողային վարչությունը որպես օրենք ցանկացած ժամանակ կարող է վաճառել ամբողջ գյուղեր այս կամ այն աղայի և գյուղացիներին դարձնել նրա «մարարան», այսինքն՝ ճորաբ։

«Մի քանի ոսկու համար,— գրում է Փափազյանը,— գյուղացու հողը հանկարծ դառնում է սեփականություն մի վաշխառուի, մի տաճկի և կամ մի որևիցե քյուրդ աղայի, որը հանկարծ «Թափուգայիրեսիից» մի խուզիկ ձեռքը կգա վոնդելու գյուղացիներին իրանց հողերից և եթե ուզենա դոնե հողատիրոջ մարարան կլինի»։

Առևտրա-վաշխառուական կապիտալի լայն տարածումը գավառներում, ռուս-թյուրքական պատերազմից հետո էլ ավելի խորացնում է գյուղի շերտավորումը, գյուղացուն մոռեցնում քաղաքի շուկային, ուժեղացնում պանդխտությունը։

Փափազյանի նպատակն է ցույց տալ նոր հարաբերությունների թողած բացասական հետևանքները՝ մարդկանց հոգեբանության, նրանց մտածողության և կեցության վրա։

Իր նամակներում Փափազյանը նկարագրում է այդ հետևանքների բազմաթիվ օրինակներ։

«Երեկ էր այդ և այսօր. երեկ տեսա դեպի սպանդանոց գնացողներին, այսօր էլ զոհերին»։ Խոսքը վերաբերում է Պոլիս գնացող և Պոլսից վերադարձող պանդուխտներին։

«Ձեզ և բոլորիդ հայտնի է, թե ինչ հանգամանքներից ստիպված մշեցին, վանեցին և այլն պանդխտության է դիմում, թե ինչպես հարկերը, վաշխառուն, ավազակները, բոլորն էլ միացած հանում են իրենց երկրից և գլորում են նրանց Կ. Պոլիս՝ անդունդը, ուր նրանք թաթախվում են տիղմերի մեջ...»։

Փափազյանը պատմում է, թե ինչպես նրանք գնում են Պոլիս, եթե չեն մեռնում ֆիզիկական ծանր աշխատանքից, քաղցից, բաց երկնքի տակ, վերադառնում են կապիտալիստական շրջապատի կնիքը վրան.

«Գնում են նրանք պարզ, անկեղծ, ոչինչ չի ստիպում նրանց ստախոսել, կեղծել, խարդախել, անբարոյականանալ, փողի համար ամեն ինչ ծախել, զգալ մի անամոթ արհամարհանք դեպի հայրենիքը, նրա նվիրական իրերը, ամուսնական անրծությունը, մայրենի լեզուն, իր գյուղական պարզությունը։

Եվ ահա գնում են այդ խեղճերը Կ. Պոլիս, Եգիպտոս, Ամերիկա և հետ են դառնում ստախոս, կեղծավոր, խարդախ, անբարոյական և ամեն ինչ... մի խոսքով մի հրեշ դարձած»։

Խոսելով լուսավորության, կրթության մեջ բուրժուական բարքերի ներթափանցման մասին, Փափազյանը ցույց է տալիս, թե ինչպես է հայ երիտասարդն ապականվում բուրժուական այնպիսի դաստիարակությամբ, որի հիմքում ընկած է եվրոպական գաղութարարների տնտեսական և կուլտուրական քաղաքականության պրոպագանդան։

Վ. Փափազյանը սուր քննադատության է ենթարկել ամերիկյան գաղութարարներին ստորաքարշորեն ծառայող հայ բուրժուազիային, ցույց տալով ամերիկյան դաստիարակության բացասական հետևանքները։ Քննադատելով Խարբերդի «Եփրատ կոլեջիա» տված կրթությունը, Փափազյանը դառնությամբ գրում է. «Դեռևս ոչ մի աշակերտ դուրս չեկավ, որ մի տի-

բացուից ավելի և սիմվոլական լեզվից բացի ուրիշ բան չգիտենար, դեռ մեկը չտեսանք, որ Ամերիկա չսիրե... այդ ամերիկայարանությունը սկսած հինգ տարեկան մանուկից մինչև 60 տարեկան ծերունու մեջ վարակված է այն աստիճան, որ գունդ առ գունդ գիմում են երեկույթներին, ուր սեղանի վրա գրված են խոշորագույններ, նրանց մեջ ամերիկյան տեսարաններ, բերնի ջրերը վազելով լսում են միսիոնարի կամ տիկին միսիոնարի պատմած Ամերիկայի նկարագրությունները... մի օրինակ բերելու համար անպատճառ հայ բուրժուան քեզ այսպես կասի. «Ամերիկայում այսպես են առնում, այսպես են ուտում, ման գալիս և այլն և այլն»։

1890 թ. մարտի 20-ի նամակում Փափազյանը մերկացնում է ամերիկյան միսիոնարների գործունեության նպատակները, որոնք հայ ժողովրդին կտրում են իր «Հայրենիքից» այն է ազգային հողից։

«Մի ամբողջ սիստեմատիկական ոստայն է սարքված Թյուրքահայաստանում բողոքականներից, որոնք մինչև այսօր դեռևս չեն կարողացել և ոչ մի հատ իսկ մահմեդական քրիստոնյա անել, իսկ օգուտ քաղելով հայերի թշվառ կյանքից, գրավում են նրանց, ոմանց փող տալով, ոմանց գործ տալով, այլոց քյուրդերի և կառավարության տված նեղություններից պաշտպանելով և շատերին սովի կամ այլ ժամանակ օգնելով...»։

Փափազյանը կոչ է անում պայքարել այդ «ամերիկյան տրամադրությունների դեմ», «բողոքականության» դեմ այնպես, ինչպես պայքարում են «հարստահարությունների» դեմ։

Նա կենսունակ է համարում ժողովրդին, ջերմորեն նկարագրում նրա հոգևոր հարստությունները, հնագույն կուլտուրայի մնացորդները, այդ բոլորի մեջ տեսնելով ժողովրդի զարգացման ներքին ուժերը։

Փափազյանը սուր ծաղրի է ենթարկում կրթության և լուսավորության գրվածքը Պոլսի դպրոցներում և գավառներում։ Քննադատելով ժամանակի դասագրքերից մեկը, նա գրում է. «Այդ դասագրքի մեջ եթե հարյուր տարի փնտրես, անուններից բացի ոչինչ չպիտի գտնես. էլ Միացյալ Նահանգներից յուրաքանչյուր կանտոնի անուն չեն մնացել... բոլորը կան մեջը, մինչդեռ և ոչ իսկ հետքեր կգտնես թե ինչ է Վան, Մուշ, կամ նույնիսկ որտեղ են ապրում մանուկները»։

Խոսելով Խիզան, Կարճևան գավառներում ապրող ժողովրդի տնտեսական ծանր պայմանների, կրթության և լուսավորության անմխիթար վիճակի մասին, Փափազյանը թվում է վեց ընկերություն, որոնք բացի ժողովրդին «հարստահարելուց» ոչինչ չեն անում։ «Մեղա, մեղա... այս բոլոր հասարակական ընկերությունները կազմում են ժողովներ, լրագրերի մեջ գովում են, փառաբանում իրենց գործունեությունը, հետո անդադար արտասվում են, որ փող չունեն, «սնդուկներն անձուկ վիճակի մեջ էր»։

Փափազյանը պարոնյանական ծաղրով մերկացնում է նրանց գործունեության կատարյալ բովանդակազրկությունը։

Անդրադառնալով տարբեր դասակարգերի միջև եղած փոխհարաբերություններին, Փափազյանը գրսևորում է իր բացասական վերաբերմունքը ժողովրդի ուսերին նստած, նրա անունով իր «սնունդը» հայթայթող հոգևորականության նկատմամբ։ Խոսելով Վանի, Էրզրումի առաջնորդների մասին, նա ցույց է տալիս նրանց համագործակցությունը տիրապետող դասակարգերի հետ և նրանց տված վնասը ժողովրդին։

Արևմտահայ կյանքը պատկերող այդ նամակներն են, որ դառնում են Փափազյանի նույն շրջանում գրած նոր պատմվածքների հիմքը։

Առաջին անգամ հայ գրականության մեջ հանդես է գալիս թյուրքական լծի տակ տառապող հայ ժողովրդի արևմտահայ հատվածի սոցիալական կյանքի բազմակողմանի երևույթների գեղարվեստական նկարագիրը։

Այդ պատմվածքներում նկարագրվում են թյուրքական տիրապետության տակ ապրող հայ աշխատավորական մասսաների քաղաքական-տնտեսական իրավական ծանր անապահով պայմանները։ Գեղարվեստական կոնկրետ փաստերի մեջ երևան են գալիս պաշտոնական և անպաշտոն հարստահարիչների՝ թյուրք, քյուրդ, բոլոր տեսակի իշխողների շահագործման բազմատեսակ եղանակները։ Պատմվածքներում ցույց են տրված, թե ինչպես շահագործումը, թալանը խրախուսվում և հովանավորվում է թյուրքական տիրապետող օրգանների կողմից, նպատակ ունենալով հայ գյուղացիներին էքսպրոպրացիայի ենթարկել, զրկել իրենց հողից, հետապնդելով ընդհուպ մինչև նրանց ֆիզիկական ոչնչացումը։

Թյուրք, քյուրդ իշխողների կողքին հանդես են գալիս ֆեոդալական օրենքների, կամայականությունների ամենացայտուն արտահայտիչները հանդիսացող հայ վաշխառուական կապիտալի և հայ հողատերերի հարստահարության ամենանողկալի և անմարդկային ձևերը։ Փափազյանի այդ շրջանի պատմվածքների հիմքում ընկած է հայ ժողովրդի արևմտահայ հատվածի գյուղացու ինչպես տնտեսական, այնպես էլ ֆիզիկական գոյության պահպանման հարցը, որը սերտ կերպով կապված էր հայ ժողովրդի ազգային ազատագրության հարցի հետ։

1889 թվականին ահա «Մշակում» տպագրված պատմվածքներով Փափազյանը թևակոխում է իր ստեղծագործության բեղմնավոր շրջանը, որով և նա ճանաչվել է որպես հայ գրականության նշանավոր գրողներից մեկը։

Փափազյանի ստեղծագործության այս նոր շրջանի քննությունը սակայն առանձին հարց է, դուրս ներկա հոդվածի սահմանից։